վերակացուի պատրիարքին Յունաց և կղերաց Նորին, զի 'ի կատարել զօրէնս իւրեանց յԱյրի անդ՝ չհակառակիլ միմեանց, այս ամենայն կատարեցաւ 'ի ձեռն պաշտօնէի դրան։

Ապա դարձուցանէ զդէմ բանին առ դատաւորն Երուսաղէմի, քանզի ընդդէմ Կայսերական հրամանին գիր տուեալ էր Լատինաց, չփոխել զինդիրն կարգադրեալ, ջնջել և բառնալ 'ի միջոյ զգիրն գրեալ 'ի բարբառ Արաբացւոց (Հէօճճէթ), և մի եւս համարձակիլ յայնպիսի կասկածաւոր գրութիւնս, մշանջենաւոր յարգել զկայսերական օրինադրութիւնն։ Տեղիքն զորս յիշեցաք, մնալ 'ի ձեռս Յունաց, և բառնալ 'ի նոցանէ զիշխանութիւնս Լատինաց, բանալի դրան Այրին եւ հրովարտակս այս մնալ 'ի ձեռս Յունաց. չհամարձակիլ Լատինաց 'ի կռիւ և 'ի հակառակութիւն ընդդէմ օրինադրութեանցս։

Նմանապէս ըստ մտաց Կայսերական հրովարտակին եւ օրինադրութեանն, որ նախ քան զայս տուաւ ազգին Հայոց, մի՛ լիցի վէճ եւ խռովութիւն պատճառանօք. պատուէր տալ մեծամեծացն այլազգեաց չվրդովել և արկանել խռովութիւն 'ի մէջ Պատրիարքաց և միաբանաց սակս ոգահութեան իւրեանց՝ լինելով միոյն պաշտպան և միւսոյն զրկող, յետ կարգաւորելոյ եւ աւարտելոյ զայսոսիկ ծանուցանել 'ի Դուռն, ՌՌՎՌ (1759)։

Լատինք 'ի ժամանակի խռովութեանս այսմիկ առին հրաման Արքունուստ, միջնորդութեամբ դեսպանին Գաղղիոյ, և Նորոգեցին զվանս իւրեանց յԵրուսաղէմ, և զսենեակս 'ի Ս. Յարութիւն, և զվանօրայս Բեթղեհէմի եւ Յովհաննու Մննդեան։

Յետ գործադրելոյ Կայսերական հրովարտակին և գրաւելոյ Յունաց զՍ. Տեղիս, չհանդուրժեալ Լատինաց ընդ այս, դիմեցին առ Կուսակալն Դամասկոսի Զէթէմի Ապտուլլահ Փաշայ, և չրջեցին զնա 'ի կողմն իւրեանց մեծամեծ տրօք և պատարագօք, որսացին նաեւ 'ի կամս իւրեանց զգլխաւորս այլազգեաց Երուսաղէմի և զդատաւորն իսկ գլխովին։ Եւ 'ի դալստեան Կուսակալին յԵրուսաղէմ ըստ սովորութեան միանգամ 'ի տարւոջ, արգել զՅոյնս 'ի լուանալոյ զՊատանատեղին Քրիստոսի, զոր օրինադրեալ